Հաստատեցին Սինոդ, և այն եւս մնաց անդործագրելի։ Պօղոս Եպիսկոպոս աղաչէր զՊատրիարքն խորհիլ ընդ գԼՀ խաւորս ազգին վասն Աթոռոյն Երուսաղէմի, այլ նորա ոչ մատուցեալ ունկն՝ զնոյն ինքն զՊօղոս ասէր պատճառ աւերման Աթոռոյն, և 'ի հարցանել նորա զվասն էրն. ասէ՝ ընդէ՞ր առաքեցեր ասի զԻոնէսիոս վարդապետ, ո՞ գիտէ որքան կաշառս տուեալ ես և տալ ետուր. Պօղոս ասէ՝ ազգն յղեաց զնա՝ եւ ամենեքեան գիտէին զգնալ նորա, բայց ոչ ինչ ասացին յայնժամ, ո՞ւմ վասն է՞ր տըուեալ եմ զկաշառն՝ եթէ այնու եղանակաւ յղեալ եմ զնա, չգիտեմ զպատճառն, յորմէ երեւի թէ նա անդ գողանայ և ես ասա, և ընկերութեամբ բաժանեմք զինչս Աթոռոյն, զի եթէ ետու զկաշառս՝ յայտ է թէ Ճարտարապետին և Քեահեայ Ամիրային տուեալ եմ. զի հրամանաւ նոցա գնաց նա յԵրուսաղէմ, և նոքա էին խորհրդակից Աթոռոյն. այս անցք անցին 'ի Պատրիարքարանի յերեկոյի Բուն բարեկենդանի յետ ընթրեաց. զայս ամենայն ծանոյց նոցա Պօղոս և այլոց եւս. և չվհատեալ երբէք դեգերէր հանապազ 'ի դրունս մեծամեծաց գտանել զհնարս ազատութեան Աթոռոյն, և թեթեւցուցանել զծանր լուծ կեղեքիչ բըռնաւորաց, մինչ պատրաստիլ տալ գիր աղաչանաց առ Տէրութիւնն և այսպէս յամենայն ուրեք պատմէր զվասնդ Աթոռոյն՝ եւ պարտատերք պաշարեալ զնա պահանջէին զդրամս, և նա ոչ գիտէր թէ ուստի հատուցցէ, և ոմանք մեղադրէին զնա իբրեւ զշռայլս և զանխոհեմս։ Աղաչէր Պօղոս զմեծամեծս արձակել զինքն 'ի պաշտօնէն յայնմանէ, զի լաւ էր ինձ ասէր մեռանիլ՝ քան տեսանել զԱթոռն յայնպիսի նսեմութեան, այլ նոքա ոչ լսէին, զի անմիաբան էին. առաջի եդ նոցա գնալ յԵրուսաղէմ և եթէ ոչ հաճին՝ յէջմիածին, հրաժարիլ 'ի պաշտօնէն՝ փակել զփոխանորդարանն եւ տալ զբանալին ժողովրդոց. սակայն երկնչէր 'ի հասարակութենէ, զի ամենայն ոք հառաչէր 'ի վերայ թշուառութեան Երուսաղէմի և Էջմիածնի. նմին իրի թողեալ զամենայնն 'ի բաց՝ զհետ եղեւ միաբանել զգլխաւորս ազգին, զի գոնէ սատարութեամբ նոցին մարթասցի սանձել զբռնութիւն Կուսակալին Դամասկոսի, որպէս սկիզբն եղեւ ժողովելոյ նոցա 'ի տուն Ճարտարապե-